

Հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլ - 2020 թ.

Հարցաշար

Տևողությունը՝ 150 րոպե

12-րդ դասարան

Հայկական լեռնաշխարհում հայր ծնված օրից ապրում է հայոց աշխարհի փառահեղ հսկայի՝ քիբրիական Մասիսի անկապտելի կախարդանքը: Նրա խոլական պատկերը բոլոր, անգամ ներհակ ու անգոսնելի հոգիների մեջ կնքվում է երկյուղախառն հմայքով:

Գերության պես մի բան է տիրական տեսքով Մասիսի ծածուկ թովչանքը հոգիների վրա: Նրա դեմ ընդվզում չկա: Նրա հմայքի գորությունը մշուշի նման մանուկ օրերից թափանցում է մեր մեջ, ձևավորում հայի հոգեկերտվածքը՝ դարձնելով նրան ազատամիտ և ոգորոդ, նախանձախնդիր և ստեղծագործ, .... և ...., ..... և .....

Հոգու յուրաքանչյուր զգացողություն՝ բերկրանք թե տրտմություն, հուզմունք թե խոկում, մշտապես կրում է լեռան անոսր ու լուսացնցող ստվերը: Այդ ստվերի ներքո օրավուր հղկվում են մանուկ հոգիները լեռան գերբնական ոգով, նրա լուսեղեն կնգուղի, ցնորագեղ ծիրանիի, խանդակաթ ու վսեմ պատկերի անվերծանելի խորհրդով: Ոչ ոք չի զգում իր ներքին գերությունը, սակայն նա, ով մանկությունից ապրել է Մասիսի կախարդանքը, ընդմիջտ այս հսկայի խստությունն ունի իր հոգում և իր էությանը նրա մի մասն է:

Անցվոր ու եկվոր ընդարմանում են լեռան հանդեպ: Բարձունքից թե հարթությունից Մասիսը միշտ առինքնող է. ճամփորդը նայում է նրան երկյուղած ու խորունկ պատկառանքով, ասես խոսք ու պատգամ է սպասում համր հսկայից:

1. Իսկ ի՞նչ զգացողություն ես ունենում դու Մասիսին նայելիս: Շարադրի՛ր 1-2 նախադասությամբ: (2 միավոր)
2. Ի՞նչ պատգամ ես սպասում համր հսկայից: (1 միավոր)
3. Բացատրի՛ր **հոգեկերտվածք** բառը: Շարունակի՛ր հայ մարդուն բնորոշ հատկանիշների շարքը ևս չորս որոշիչներով: (1 միավոր)
4. Գրի՛ր **անկապտելի, խոլական, անգոսնելի, ոգորել, նախանձախնդիր, խոկում, անոսր, կնգուղ, ցնորագեղ, խանդակաթ** բառերի հոմանիշները կամ բացատրի՛ր բառակապակցությամբ: (2 միավոր)
5. Ի՞նչ խոսքի մասի արժեքով են գործածված **անգամ, նման, սակայն, ասես** բառերը: Տրված բառերը գործածի՛ր նախադասությունների մեջ այլ խոսքիմասային արժեքներով: (2 միավոր)
6. Կազմի՛ր չորս նախադասություն **շառափ, հույլ** համանուն բառերով: (2 միավոր)
7. Տրված բառերի արմատներով կազմի՛ր մեկական բարդ կամ ածանցավոր բառ. **անկապտելի, ընդվզում, ներհակ, անվերծանելի**: (2 միավոր)
8. Տրված եռյակներից ընտրի՛ր մեկական բաղադրիչ և կազմի՛ր կրկնաձանցավոր բառեր. վերջակետ-տարբերակ-բեկումնային, կարևոր-պաճուճանք-կարեվեր, տարորոշում-քառակուսի-անմիջական, ակնոցավոր-ատենադպիր-անգուգական: (1 միավոր)
9. Բացատրի՛ր «դամոկլյան սուր», «Հերոստրատի փառք» թևավոր խոսքերը: Տո՛ւր ծագման մեկնաբանությունները: (2 միավոր)
10. Գրի՛ր շարադրություն «Ինքս ինձ հետ» վերնագրով (2 էջի սահմաններում): (5 միավոր)